## Արձանագրություն N 2

**<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կարիքների համար <<Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների>> ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-03>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան «30» նոյեմբերի 2016թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Անահիտ Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄՀ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Աղավնի Բուդուլյանը՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:*

### 1. «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-03» ծածկագրով ընթացակարգի ներկայացված հայտերի բացման մասին.

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի նոյեմբերի 30-ին, ժամը 11:00-ին:

**2.Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

**2.1** Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Սպունգ, աման լվանալու | 30160 |
| 2 | Սանդուղք, մետաղյա | 140000 |
| 3 | Սանդուղք, մետաղյա | 480000 |

2.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1 | «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ | ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6<br>Հեռ. (010)624966 |
| 2 | «ԼԻԴԵՐ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ | ք. Երևան, Դավիթաշեն 2թ., 13շ., 15 բն<br>Հեռ. (094)031957 |

2.3 Համակարգում 21.11.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**3.1 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

**4.1.1** «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի և «ԼԻԴԵՐ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3.2 Տվյալներ յուրաքանչյուր մասնակիցների ներկայացրած հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի/՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

**3.2.1** «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան: Վերջինս գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3.2.2** «ԼԻԴԵՐ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ Գնի

առաջարկի՝ Հավելված 4, որտեղ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առկա է հաշվարկի սխալ: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը և Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մերժել «ԼԻԴԵՐ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ -ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գներն են՝

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | 1. «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Սպունգ, աման լվանալու | 15827.72 | 1451.45 | 17279.17 | 3455.83 | 20735 |
| 2 | Սանդուղք, մետաղյա | 106759.8 | 9790.2 | 116550 | 23310 | 139860 |
| 3 | Սանդուղք, մետաղյա | 352660 | 32340 | 385000 | 77000 | 462000 |

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | 2. «ԼԻԴԵՐ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Սպունգ, աման լվանալու | 40240.00 | 5000.00 | 45240 | 0 | 45240 |
| 2 | Սանդուղք, մետաղյա | - | - | 182000 | 0 | 182000 |
| 3 | Սանդուղք, մետաղյա | - | - | 580000 | 0 | 580000 |

**«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտով առաջարկվող 1-3-րդ չափաբաժիններում նշված ապրանքները հանդիսանում էեներասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ:*

<u>5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց</u>

5.1. <u>1-ին, 2-րդ և 3-րդ</u> չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ –ին:

Ներկայացված գնային այլ առաջարկները գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները,

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

<u>6. Հանձնաժողովի քարտուղարին.</u>

**6.1** Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը:
**6.2** Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի դեկտեմբերի 06-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի <<զ>> պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**7. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ հրավիրել 2016 թվականի դեկտեմբերի 08-ին, ժամը՝ 11:00-ին:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ Կարեն Մելքոնյան

Անահիտ Ավագյան

Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝ Մարիամ Հայրապետյան